Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.71-93
Կ-78
Ug

Ի. ԿՈՐՇՈՒՆՈՎ ՅԵՎ Լ. ՆՈՏԿԻՆԱ

Թարգմ. ԱՇՈՏ ՇԱՅԲՈՆ

# ՅԵՂԻՐ ՊԱՏՐԱՍՏ

# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ



ՊԵՏՀՐԱՏ

1932 ՅԵՐԵՎԱՆ

3832
891.71-93
4-78
2011-05

Լենինականի I ոջախի յերեխաները Հյուր յեղան սահմանապահ կարմիր բանակայինների մոտ: Հետո իրենք էլ Կարմիր բանակի օրը, փետրվարի 23-ին, կարմիր բանակայիններին հրավիրեցին իրենց ոջախը:

Եդ օրը յերեխաները վորոշեցին մի խաղ կազմել և ցուցադրել նրանց.

Ա՛յ թե ինչ խաղ եր:

Խաղադահլիճում խորանարդիկների մոտ պլակատ կախեցին:




Խաղադահլիճ յեկան ոջախի բոլոր յերեխաները:

— Այստեղ վորտեղ են գրվում կամավոր Կարմիր բանակին:

— Ա՛յ, այստեղ,— ցույց տվին Վահանի վրա, դաշնամուրի կողքին:

Վահանի վրա խոշոր տառերով գրված եր ԽԱԶՄԿՈՄԱՏ, իսկ վահանի տակ, սեղանի շուրջը նստել եյին ավագ յերեխաները և կամավոր եյին ընդունում: Նշանակում եյին վոմանց հետևակ, վոմանց ոդաչու:

Նրանք, վորոնք կարողանում եյին լավ նկարել և լավ թվանշաններ կարդալ, ուղարկեցին հրաձգային բաժին: Յերեխաներից՝ կոմյերիտականներին ուղարկեցին նավատորմիղ: Նրանք ոջախում բոլորից կրտսերներն եյին:

Մնացած յերեխաներին ուղարկեցին ֆաբրիկաներն ու գործարանները: Այնտեղ պատրաստում եյին հագուստ և զինամթերք յերիտասարդ կարմիր բանակայինների համար:

Յերբ բանվորները աշխատանքը վերջացրին, նրանք էլ մտան Կարմիր բանակ:

Բոլոր կարմիր բանակայիններն ստացան բուդյոնովկաներ, կարված շինելներ և ուղևորվեցին ԽՍՀՄ-ի սահմանի բանակատեղիները: Իսկ ԽՍՀՄ-ի սահմանը հենց այստեղ՝ դահլիճում եր, դաշնամուրի աջակողմում:

Կարմիր բանակայինները բանակատեղին են գնում:

Յեկան: Դաշտում անմիջապես ցրեցին սպիտակ վրանները: Կարմիր դրոշակը բարձրացավ յերկար փայտի վրա:




1004
3002

Բանակատեղին պատրաստ ե: Ամեն տեղ քայլում են պահակները, պահեստների մոտ, զենքերի և դրոշակների մոտ:

Թշնամիները մոտ են: Բանակատեղից յերևում ե նրանց ամրությունները: (Ամրությունը դահլիճի ձախ կողմումն ե):



Թշնամու ամրոցի վրա ծածանվում ե մեծ և սպիտակ դրոշակ ֆաշիստական նշանով:

Վողջ ամրոցը զարդարված ե դրոշակներով: Ահա այդ դրոշակները:

Արդյոք գիտե՞ս, թե ո՞ւմն են նրանք:



24 MAY 2013

Տրը՛ւ-տը՛ւ, տը՛ւ-տը՛ւ, տը՛ւ: Փողհարում է փողհար կարմիր բանակայինը: Աշխատանքային օրը բանակավայրում՝ վերջացավ: Լսվում է հրամանը: «Շարժվի՛ր»· բոլոր շարքի յին կանգնում ըստ հասակի:

— Ուղղությունը աջ: Զգա՛ստ: Աջ դա՛րձ: Քայլով մա՛րշ:

Թմբուկի տակ բոլորը քայլում են դեպի լենինյան վրանը:

Այնտեղ քաղժամ են անցկացնում:

— Ընկերնե՛ր, մեզ ինչի համար է հարկավոր կարմիր բանակը:

— Խորհուրդների յերկիրը թշնամիներից պաշտպանելու համար:

— Իսկ ովքեր են մեր թշնամիները:

— Բոլոր յերկրների կապիտալիստները:

— Ո՞վ կազմակերպեց կարմիր բանակը:

— Բոլշևիկների կուսակցությունը:

— Ո՞վ դարձրեց մեր բանակն ամուր և ուժեղ:

— Բոլշևիկներն իրենց օրինակով և գործով:

— Ո՞վ է կարմիր բանակայինը:

— Հավատարիմ պահակ—հեղափոխության պաշտպանը:

— Ո՞վ կարող է կարմիր բանակային լինել:

— Բանվորները, գյուղացիները, ծառայողները, բոլոր աշխատավորները:

— Մենք, արդյոք պատերազմ ուզում ենք:

— Պատերազմ չենք ուզում, բայց ռազմի պատրաստ ենք:

Տրու-տը՛ւ, տը՛ւ, տու-տրը՛ւ, փողհարում է փողհարը: Քաղժամը վերջացավ: Սկսվում է հեծյալ յերթը: Հրամանատարը հրաման է տալիս.— «Քայլով՛ մա՛ա՛րշ»: Հեծյալները մեկնում են դանդաղ քայլով:



Հրաման.—«Արշավով մա՛րշ»: Ձիերը վազում են:

«Քառարշավով մա՛րշ»: Կարմիր բանակայինները սմբակեցին ձիերին և ընթացան բոլոր ուժով:



Տրը՛ւ, տը՛ւ, տը՛ւ, տը՛ւ, տրը՛ւ: Փողհարում է փողհարը: Յերթը վերջացավ: Ձիերին տանում են ախոռները:



Թաքնված հրաձիգները:

Իրականում վոչ մի սավպանակ չկար: Այդ փորձնական չփոթ եր:

«Մարզանքի շարվի՛ր»,—լսվում է հրաման: Բոլորը շարվում են չորս-չորս, մեկ պարզած ձեռքի հեռավորության վրա մեկը մեկից:

Հրամանատարը համարում է.

«Մեկ—հրացանները ցած:

««Յերկու»—հրացաններն առաջ:

«Յերեք, չորս» — հրացանները վեր:

«Վերջ պարապմունքի, մաքրել հրացանները»:

Կարմիր բանակայինները նստում են դաշտին և մաքրում հրացանները:

Տրը՛ւ, տը՛ւ-տը՛ւ, տը՛ւ, տրը՛ւ... Սկսվում է նշանի տախտակի վրա կրակելու ժամը:

Հանկարծ հրամանատարն ասում է.
«Թշնամու սավառնակ»:

Կարմիր բանակայիններն արագ թաղնվում են դիմակ կարպետների տակ: (Կարպետներ, վորոնք քողարկում են):

Կարպետները կանաչ են, ինչպես կանաչ խոտ: Ոդաչվին չի յերևում բարձրությունից, թե վորտեղ են



Մեկը յերգում է.—
Վերցնենք նոր հրացաններ
Դրոշիկները ավիններին:
Բոլորը միասին շարունակում են:
Յերգերով կքայլենք մենք
Ռազմի պարապմունքներին:

Մեկ-երկու—մե՛կ կարգ:
Առաջ բանակ...

Երաժշտ. Ն. Սարենչիկովի.



Հրացանները մաքրված են: Կարմիր բանակայինները նրանցից բուրգեր կազմեցին: Աշխատանքային օրը վերջացավ: Իջնում է գիշերը: Հրաման: Ստուգման շարվիր:

Բոլորը շարվում են:

Ուղղվի՛ր: Զգա՛ստ:

— Բեյակյան: — Ե՛ս:

— Վոլունյան: — Ես:

— Հովհաննիսյան: — Ես:

— Ասոյի Զնդի:—Ես:

— Մամադ Յուսուֆով: — Ես:

— Քեթո Կալոձե: — Ես:

— Զեյլինգեր: — Ես:

— Միտիկ: — Ես:



Ստուգումը վերջացավ: Բոլոր ռազմիկներն իրենց տեղերում:

Տրո՛ւ, տո՛ւ, տո՛ւ, տո՛ւ, տրո՛ւ: Փողհարում ն փողհարը: Բանակատեղին քնում է: Պահակները քայլում են հրացանները հավասարակշիռ գրկած:





— Կանգնի՛ր, ո՞վ է գալիս:

— Փոխվի՛ր: Հերթապահ դիրքի:

— Հանձնում եմ դիրքը համար մեկ, գնդի դրոշը:

— Ընդունում եմ դիրք համար մեկ, գնդի դրոշը:

— Դիրքը հանձնեցի:

— Դիրքն ստացա:

— Դիրքի հին պահակ, հետևիր ինձ, մա՛րշ:





Այդ պահակներն են փոխվում դրոշակի մոտ: Նրանց փոխում է ջոկապետը:

Հին պահակը գնում է:

Նորը կանգնում է դրոշակի մոտ

Գիշեր է: Լռություն:

---

Բո՛ւհ,... բո՛ւհ, բո՛ւհ, բո՛ւմ... տա՛, տա՛...

Կրակոց: Ելի կրակոց:

Ելի, ելի կրակոց:

Կրակում են ամրոցից մեր բանակատեղի վրա.

Բանակատեղից դուրս է վազում հրամանատարը: Նշան է տալիս փողհարին: Փողհարը փողհարում է ահազանգ:

Ահազա՛նգ,

Ահազանգ

ԱՀԱԶԱՆԳ...



Ռազմիկները թռչում են դուրս վրաններից: Ճանապարհին հագնում են շինելները, հակագազերը: Թամքում են ձիաներին: Ցատկում են զենքերն առաջ:

Հրամանատարն ասում է.

— Ընկերներ: Մենք պատերազմ չենք ուզում, բայց, երբ մեզ վրա հարձակվում են, մենք նրանց լավ կվանենք: Մենք ռազմի պատրաստ ենք: Խիզախ դեպի առաջ: Թշնամին դռների մոտ է:

Նետի պես թռչում են ձիերը:

Սկսվում է հակատամարտը՝ Հրանոթաձիգներն ամրոցն են կրակի տալիս։

Արագորեն են աշխատում կարմիր բանակայինները թնդանոթների վրա։ Լցնում են, փականը փակում։ Նշանառուն ձգում է թելիկը։ Կրակ։ Ամեն մի հինգ վայրկյանից — կրակ։ Այդ ժամանակ հետիոտնը շարժվում է ձախից և աջից դեպի թշնամու ամրոցը։

Առջևից հեծյալն է արշավում։

Հեծյալները պետք է հասցնեն գլխավոր հարվածը, իսկ հետիոտնը պետք է ձախ թևից անցնի թշնամու թիկունքը։

Ա՛յ, թե հարձակման ինչպիսի պլան նկարեց հրամանատարն իր բլոկ-նոտի մեջ։



Անվրեպ կրակում են հրաձգայինները։ Ֆաշիստական նշանը ամրոցի ծայրից թռել է ցած։

Հրամանատարը հրաման է տալիս. «Գրո՛հ»։ Հեծյալները հասցնում են առաջից մահացու հարված- թիկունքից, աջից, ձախից խփում է հետիոտնը։

Ընկնում են վիրավոր ռազմիկները (յերեխաները խաղից առաջ պայմանավորվել են, թե պատերազմի ժամանակ ով է ընկնելու)։

Թշնամին տեղ չունի փախչելու։ Կարմիր զորքերը ներս են խուժում ամրոց։

Ուռռա՛...

Պոկված են կապիտալիստների դրոշակները։ Նրանց տեղը ծածանվում են կարմիր դրոշակներ։ Պատերազմը վերջացած է։ Սանիտարները հավաքում են վիրավորներին։ Կարմիր բանակայինները շարվում են և վերադառնում իրենց բանակատեղին։

Գնդի հրամանատարն ասում է. —

— Ընկեր կարմիր բանակայիններ։ Դուք վո՛չ միայն խոսքով, այլև գործով ցույց տվիք ձեր ռազմական պատրաստականությունը։



Ձեր միացյալ գրոհով թշնամուն վանեցիք և հնարավորություն տվիք բանվորներին հանգիստ շարունակեն շինարարությունը։ ԽՍՀՄ կառավարության անունից հայտնում եմ ձեզ շնորհակալություն։

Կարմիր բանակայինները մեկ մարդու պես —

— Ծառայում ենք աշխատավոր ժողովրդին։

Մեկը յերգում է.

Մեզ թակել, թակել ուզեցին
մեզ թակել եյին ուզում

Բոլոր կարմիր բանակայինները.
Իսկ մենք պարապ չնստեցինք—
դրան եյինք սպասում:



Երգելով գալիս են բանակատեղին: Բանակատեղում նվագում են, երգում, պարում.

Ռազմական խաղը վերջացած է: Բոլորին դուր յեկավ: Կարմիր բանակայինները հարցնում եյին.

— Իսկ ո՞վ է սա բոլորը կազմել: Ո՞վ է շինել, գլխարկները, հրացանները, թնդանոթները, վրանները.

Ցերեխաները պատասխանում եյին.

— Մենք ինքներս ենք շինել:

Խաղի մեջ ամեն ինչ խաղալիքներից էր և ոչ թե իսկական:

Վրանները, հրացանները, թնդանոթները, հակագազերը, ամբողջ դրոշակները, ձիերը՝ ներկած լրագրի ստվարաթղթերից եյին պատրաստված:

Իսկ ստվարաթուղթ այսպես պատրաստեցինք. վերցրինք մի թերթ լրագիր, վրան սոսինձ քսեցինք, նրա վրա մի ուրիշ լրագիր դրինք: Լավ հարթեցինք կնճիռները: Քսեցինք յերկրորդ թերթը և վրան յերրորդը դրինք՝ Այսպես՝ վեցը թերթ: Չորացրինք և ստվարաթուղթը պատրաստ եր:

Կարպետները քողարկվելու համար—հասարակ լրագրի թերթեր եյին, գունավոր կանաչ թանաքով ներկված: Գլխարկները կարում եյինք ինչպես ֆաբրիկներում, կոնվեյերի ձևով. մի սեղանի վրա կտրում եյին, մյուս սեղանին կարում՝ մեքենայով, յերրորդում կտրում եյին աստղանշանները և կպցնում պատրաստ գլխարկներին:



Այստեղ էլ պատրաստում էին սանիտարական կապիչներ:

Թնդանոթը շինեցինք այսպես



փողը ստվարաթղթից. լաֆետը ստվարաթղթից. 2 անիվը ֆաներից, լծակը փայտից. վահանը ստվարաթղթից. փականը ձողանից,



Միացրինք թնդանոթի մասերը ներկեցինք կանաչ գույնով.

Թնդանոթի գնդակները լրագրի թերթերից շինեցինք:

Մեր խաղալիքների գործարանում ստվարաթղթից ձիեր կարեցինք,

ստվարաթղթից ձիեր կարեցինք, վր- վրանները շինեցինք այսպես:





Իսկ ամրոցն այսպես:



Նայեք ուշադրությամբ նկարներին և յերևակայեցեք թե ինչպես են շինված մնացած առարկաները:

Կազմակերպեցեք ձեզ մոտ ռազմական խաղ. ինչպես և անցավ մեզ մոտ:

Յերևան
Նալբանդ— փողոց №29
[illegible]
[illegible]

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

3832

ՆԿԱՐՆԵՐ
Գ. ՂԵՏՐՈՎԻ

ՎԻՄ. ՆԿ. ԱՇԽ.
Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ



ՀՀ Ազգային գրադարան
NL0392325

**Будь готов к обороне**

ГИЗ. С.С.Р.А. ЭРИВАНЬ

Գլավլիտ № 2195 Պատվեր № 7474 (բ) Տիրաժ 4000 Վիմ. Պետհրատի Տպար. № 1626